Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 3
Իրավագիտության հիմունքներ

Քննաթերթ

Հուլիս, 2023թ.

ԲԱԺԻՆ Ա.

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. ***Ովքե՞ր կարող են հանդես գալ որպես վարձույթի պայմանագրի կողմեր***

ա) Միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք.
բ) Վարձույթի պայմանագրի կողմ որպես վարձատու կարող են հանդես գալ միայն ֆիզիկական անձինք, իսկ որպես վարձակալ միայն իրավաբանական անձինք.
գ) Վարձույթի պայմանագրի կողմ որպես վարձատու կարող են հանդես գալ միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք, իսկ որպես վարձակալ՝քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ.
դ) Վարձույթի պայմանագրով և որպես վարձատու, և որպես վարձակալ կարող է հանդես գալ քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ:

2. ***Պայմանագրով այլ կարգավորում սահմանված չլինելու դեպքում վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները հանդիսանում են.***

ա) Վարձատուի սեփականությունը.
բ) Վարձակալի սեփականությունը.
գ) Վարձատուի և վաձակալի համատեղ սեփականությունը.
դ) Վարձակալած գույքն օգտագործողի սեփականությունը:

3. ***Ինչպե՞ս է կնքվում անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը***

ա) գրավոր կամ բանավոր, կողմերի ցանկությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչպես նաև ենթակա է նոտարական վավերացման
բ) գրավոր կամ բանավոր, կողմերի ցանկությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչպես նաև ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագիրը պետական գրանցման
գ) գրավոր կամ բանավոր, կողմերի ցանկությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչպես նաև ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման
դ) գրավոր, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչպես նաև ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման:

4. ***Առևտրային կազմակերպություններն ստեղծվում են***

ա) սպառողական կոոպերատիվների ձևով
բ) հասարակական կազմակերպությունների ձևով
գ) բարեգործական և այլ հիմնադրամների ձևով
դ) տնտեսական ընկերությունների ձևով

5. ***Միացման եղանակով իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում միացած իրավաբանական անձը համարվում է վերակազմակերպված***

ա) պետական ռեգիստրում միացած իրավաբանական անձի գործունեության դադարումը գրանցելու պահից
բ) փոխանցման ակտը ստորագրելու պահից
գ) նոր ստեղծված իրավաբանական անձին գրանցելու պահից
դ) իրավաբանական անձի հիմնադրման փաստաթղթերը հատատելու պահից

6. ***Իրավաբանական անձը կարող է լուծարվել***

ա) իրավաբանական անձանց գրանցող պետական մարմնի որոշմամբ
բ) տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ
գ) կառավարման գործադիր մարմինների որոշմամբ
դ) հիմնադիրների կամ դատարանի որոշմամբ

7. ***Իրավաբանական անձի լուծարման դեպքում առաջին հերթին բավարարվում են***

ա) աշխատողների աշխատավարձի վճարները
բ) աշխատողների առողջությանը պատճառված վնասներից բխող պահանջները
գ) լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պահանջները
դ) բյուջեի հանդեպ ունեցած պարտքերը

8. ***Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ մասնակիցներն ունեն պարտավորական իրավունքներ՝ դասվում են***

ա) սպառողական կոոպերատիվները
բ) հասարակակական կազմակերպությունները
գ) պետական կառավարչական հիմնարկները
դ) տնտեսական ընկերությունները

9. Ինչպե՞ս են կարգավորվում վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները, եթե պայմանագրով դրանք որոշված չեն

ա) կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 440 հոդվածի 3-րդ մասի կանոններով.
բ) վարձավճարը պայմանագրի էական պայման է, ուստի պայմանագիրը համարվում է չկնքված.
գ) կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները.
դ) վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները որոշվում են դատական կարգով:

10. Այն դեպքում, երբ ապրանք ստացած գնորդն առուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում դրա համար, վաճառողն իրավունք ունի պահանջել

ա) պահանջել վճարելու հանձնված ապրանքի համար կամ վերադարձնելու չվճարված ապրանքը.
բ) վճարելու հանձնված ապրանքի համար և տոկոսներ՝ օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան
գ) վերադարձնելու չվճարված ապրանքը և հատուցել պատճառված իրական վնասները
դ) վճարելու հանձնված ապրանքի համար և տոկոսներ՝ օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան կամ վերադրաձնելու չվճարված ապրանքը.

11. Պայմանագրով այլ կարգավորում սահմանված չլինելու դեպքում ու՞մ են պատկանում վարձակալած գույքի բաժանելի բարելավումները.

ա) վարձակալած գույքի ցանկացած բարելավում պականում է վարձատուին
բ) վարձակալած գույքի բաժանելի բարելավումները մշտապես պատկանում են վարձատուին.
գ) Վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը

դ) վարձակալած գույքի բաժանելի բարելավումները հանդիսանում են վարձատուի և վարձակալի համատեղ սեփականությունը:

12. **Ստորև նշված հիմքերից ո՞րը ՉԻ համարվում վստահություն կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման հիմք.**

ա) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.

բ) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

գ) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը.

դ) գործատուն այլևս չի վստահում աշխատողին.

13. Աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով աշխատանքային պայմանագիրը Գործատուն կարող է լուծել, եթե

ա) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ.

բ) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու կարգապահական տույժ.

գ) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երեք չհանված կամ չմարված կարգապահական տույժ.

դ) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն մեկ չհանված կամ չմարված կարգապահական տույժ.

14. Աշխատողի առողջական վիճակի վատթարացումը կարող է պատճառ դառնալ աշխատանքային պայմանագրի լուծման համար, եթե

ա) այն կրում է կայուն բնույթ և խոչընդոտում է շարունակելու աշխատանքը կամ բացառում է այն շարունակելու հնարավորությունը.

բ) այն խոչընդոտում է կատարելու աշխատանքը թեկուզ մեկ օր.

գ) գործատուն է այդպես որոշել.

դ) այն կրում է կայուն բնույթ.

15. **Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են.**

ա) աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ.
բ) բացառապես «Հանրային ծառայության մասին» օրենքով.
գ) բացառապես աշխատանքային օրենսգրքով.
դ) «Հանրային ծառայության մասին» օրենքով, եթե աշխատանքային օրենսգրքով այլ բան նախատեսված չէ.

16. **Ստորև բերվածներից ո՞րը չի համարվում Գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման արգելքն ընդգրկող ժամանակահատված.**

ա) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.
բ) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում.
գ) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.
դ) աշխատողի՝ առկա համակարգով ուսումնառության և փորձաշրջանի մեջ գտնվելու ժամանակահատվածում.

17. **Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են.**

ա) աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով.
բ) բացառապես աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով.
գ) բացառապես աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով.
դ) աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ ծառայությունների մատուցման պայմանագրով.

18. Ստորև թվարկվածներից ո՞րը ՉԻ համարվում աշխատանքի էական պայման՝

ա) աշխատանքի վայրը.
բ) Աշխատանքի վարձատրության չափը.
գ) Աշխատանքային պայմանագրի տեսակը.
դ) Փորձաշրջանի տևողությունը և պայմանները.

19. Ստորև բերված հիմքերից ո՞րը <u>ՉԻ</u> համարվում Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմք.

ա) աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.
բ) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.
գ) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.
դ) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

20. Նշվածներին ո՞րը <u>ՉԻ</u> համարվում վարչարարության սկզբունք:

ա) հայեցողական լիազորությունների սահմանափակումը
բ) տնօրինչականությունը
գ) մրցակցությունը
դ) հրապարակայնությունը

21. Որո՞նք են անվավեր և առ ոչինչ վարչական ակտերի միջև առկա հիմնական տարբերությունները.

ա) առ ոչինչ վարչական ակտերը կայացվում են օրենսդրության դրույթների կոպիտ և ակնհայտ խախտումներով, իսկ անվավեր վարչական ակտերը ենթադրում են օրենսդրական դրույթների ոչ ակնհայտ, այլ վիճարկվող խախտումներ.
բ) երկուսն էլ ոչ իրավաչափ վարչական ակտերի տեսակներ են և դրանց միջև որևէ սկզբունքային տարբերություն առկա չէ.
գ) անվավեր վարչական ակտերը կայացվում են օրենսդրության դրույթների կոպիտ և ակնհայտ խախտումներով, իսկ առ ոչինչ վարչական ակտերը ենթադրում են օրենսդրական դրույթների ոչ ակնհայտ, այլ վիճարկվող խախտումներ.
դ) անվավեր վարչական ակտերը չեն կարող վիճարկվել դատական կարգով, իսկ առոչինչ վարչական ակտերն անպայմանորեն ենթադրում են դատական կարգով դրանց վիճարկում.

22. Եթե մատակարարման պայմանագրով ապրանքների ընտրության ժամկետ նախատեսված չէ, գնորդը (ստացողը) ապրանքների ընտրությունը պետք է կատարի

ա) ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետում
բ) մատակարարի ծանուցումն ստանալուց հետո անմիջապես
գ) տվյալ տեսակի ապրանքի ընտրության համար սովորաբար անհրաժեշտ ժամկետում
դ) գնորդի և մատակարարի կողմից լրացուցիչ համաձայնեցրած ժամկետում

23. Ո՞ր պայմանների դեպքում է ապրանքը համարվում է գնորդի տնօրինությանը հանձնված.

ա) եթե պայմանագրով նախատեսված ժամկետում, պատշաճ վայրում, ապրանքը պատրաստ է հանձնելու, եւ գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է ապրանքի համապատասխան վայրում գտնվելու մասին և այն ընդունելու համար ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ
բ) եթե պայմանագրով նախատեսված ժամկետում ապրանքը պատրաստ է հանձնելու, եւ գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է ապրանքի պատրաստ լինելու մասին կամ վերջինս լիազորված անձը ստացել է այն
գ) եթե պայմանագրով նախատեսված ժամկետում, պատշաճ վայրում, ապրանքը պատրաստ է հանձնելու, եւ գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է ապրանքի համապատասխան վայրում գտնվելու մասին
դ) եթե պայմանագրով նախատեսված ժամկետում, պատշաճ վայրում, ապրանքը պատրաստ է հանձնելու, եւ գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է հանձնելու համար ապրանքը պատրաստ լինելու մասին

24. Իրավունք ունի՞ վարձակալը վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության

ա) Վարձակալն ունի նման իրավունք միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով:
բ) Վարձակալն չունի նման իրավունք

գ) Վարձակալն ունի նման իրավունք ամեն դեպքում և այդ իրավունքը պայմանագրով չի կարող սահմանափակվել
դ) Վարձակալն ունի նման իրավունք, ամեն դեպքում, սակայն ենթավարձակալության ժամկետը չի կարող գերազանցել հիմնական վարձակալության պայմանագրի ժամկետը:

25. **Վարձակալի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝**

ա) հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի
բ) վարձատուն վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգման իր պարտականությունը
գ) վարձատուն վարձակալի օգտագործմանը տրամադրել է պայմանագրի պայմաններին համապատասխան գույք
դ) 1-ին կամ 2-րդ կետերով նախատեսված հիմքերով:

Ընդամենը՝ 50 միավոր

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Խնդիր 1 /12 միավոր/

Նիկողոսյանը կարևոր նշանակություն էր տալիս ցանկացած բիզնեսի համար ճիշտ հաշվապահություն վարելուն, և այդ նպատակով սեփական բիզնեսի համար որոշեց ձեռք բերել դրամական մուտքերը և ելքերը հստակ ամրագրող ծրագիր: Ծրագրի մասին տեղեկություն փնտրելիս՝ Նիկողոսյանը պարզեց, որ իր անձնական համակարգչի հզորությունը բավարար չէ դրա արդյունավետ գործարկման համար, ուստի որոշեց համակարգիչը հզորացնելու համար դիմել «Հզոր Համակարգիչ» խանութ սրահին (ՍՊԸ): Նիկողոսյանը համակարգիչը կնոջ հետ հանձնեց խանութին, և կողմերը պայմանավորվեցին, որ վճարումը (100 հազար ՀՀ դրամ) պետք է կատարվի համակարգիչը վերջնական հանձնելուց հետո, իսկ խանութն էլ նշեց, որ այն պատրաստ կլինի 5 օրից:

Համակարգիչը հանձնելուց 2 օր հետո Նիկողոսյանը իր ծրագրավորող բարեկամից տեղեկացավ, որ հաշվապահական հաշվառման այդ ծրագիրը նման մոդելի համակարգչում ներբեռնելիս լավ չի աշխատում: Զայրանալով այդ փաստից՝ Նիկողոսյանը դիմեց խանութին՝ նշելով, որ իրեն՝ որպես սպառողի, հավաստի տեղեկություն չի տրամադրվել, ուստի պահանջեց հետ վերադարձնել համակարգիչը:

Նիկողոսյանի պահանջին ի պատասխան հայտնեցին, որ համակարգչի հզորացման համար արդեն իսկ ձեռք է բերվել հատուկ միկրոսխեմա, որի արժեքը 20 հազար ՀՀ դրամ է: Նիկողոսյանը հրաժարվեց 20 հազար ՀՀ դրամը հատուցելուց՝ պատճառաբանելով, որ փաստացի համակարգչի հզորությունը չի ավելացել, ինքը պարտավոր չէ որևէ գումար վճարել, իսկ խանութն է իր հերթին ասաց, որի հետ չի վերադարձնելու համակարգիչը, մինչև Նիկողոսյանը 20 հազար դրամը չվճարի: Նիկողոսյանը սպառնաց խանութին, որ կդիմի դատարան:

Խանութ սրահի իրավաբանը իր հերթին հայտնեց, որ չնայած ընդունում են Նիկողոսյանի հետ համակարգչի հզորացման ուղղությամբ ձեռք բերված պայմանավորվածությունը և չեն պատրաստվում այդ փաստը հերքել, քանի որ կարևորում են իրենց գործարար համբավը, բայց այնուամենայնիվ, գտնում են, որ գրավոր պայմանագրի բացակայության պարագայում որևէ պատասխանատվություն չեն կարող ստանձնել: Նիկողոսյանի կինն էլ իր հերթին պնդեց, որ պետք չէ անհանգստանալ, քանի որ ինքը ևս ներկա է եղել համակարգիչը խանութին հանձնելիս և կարող է այդ մասին դատարանում վկայություն տալ:

1. Ինչպիսի՞ հարաբերություններ են ծագել Նիկողոսյանի և «Հզոր Համակարգիչ» խանութ սրահի միջև:

/6 միավոր/

2. Իրավաչափ են արդյոք կողմերի պնդումները: Վերլուծեք կողմերի միջև առկա հնարավոր բոլոր իրավահարաբերությունները, միմյանց նկատմամբ ներկայացած պահանջները և լուծեք վեճը՝ հղում կատարելով խնդրում ներկայացված բոլոր փաստերին:

/6 միավոր/

Խնդիր 2. /14 միավոր/

Արմենն իր զարմուհուն խոսք է տալիս, որ եթե վերջինս ընդունվի համալսարան նրան կնվիրի ոսկե մատանի:

Ոսկե մատանի գնելու նպատակով Արմենը 25.08.2016 թ.-ին հաճախում է «Ոսկու աշխարհ» խանութ: Խանութի տաղավարին իրար կողք դրված են լինում ոսկեգույն մի քանի զարդեր: Տաղավարի մեջտեղը դրված 400.000 ՀՀ դրամ արժողությամբ զարդն իրեն շատ է դուր գալիս: Բայց քանի որ դրա արժեքի չափ գումար չուներ, խանութի սեփականատեր անհատ ձեռնարկատեր Գևորգին առաջարկում է վճարել 100.000 դրամ, իսկ մնացած մասի դիմաց փոխանցել իրեն սեփականության իրավունքով պատկանող թանկարժեք նամականիշերը: Գևորգը համաձայնվում է: Արմենն առանց այլ հարցեր տալու վճարում և փոխանցում է նամականիշերը: Գևորգը տպում է ՀԴՄ կտրոն և տալիս Արմենին: Վերջինս առանց ՀԴՄ կտրոնին նայելու այն վերցնում է և դնում տոպրակի մեջ:

Մոտ մեկ տարի անց Արմենի զարմուհու մոտ կասկածներ են առաջանում զարդի ձուլվածքի վերաբերյալ: Նա Արմենին է վերադարձնում զարդը՝ խնդրելով ստուգել այն: Արմենը դիմում է փորձագետին, ով 14.09.2017 թ.-ին տալիս է եզրակացություն, որտեղ նշում է, որ զարդը ոչ թե ոսկուց է, այլ ոսկեջրած արծաթից:

Արմենն անմիջապես նամակ է գրում Գևորգին՝ խնդրելով վերադարձնել գումարը: Վերջինս 20.09.2017թ.-ին նամակով պատասխանում է, որ պատրաստ է հետ վերադարձնել գումարը մեկ շաբաթվա ընթացքում:

Մեկ շաբաթ անց ոչինչ տեղի չի ունենում: Արմենը կրկին նամակ է գրում՝

սպառնալով դատարան դիմել: Գևորգն իր պատասխանում նշում է, որ հանել է իր ՀԴ մեքենայի ժապավենը և բացահայտել, որ իր տված ՀԴՄ կտրոնում հստակ նշված է, որ վաճառվել է ոսկեջրած արծաթե զարդ, հետևաբար օրենքի որևէ խախտում չի կարող լինել: Բացի դրանից նա հայտնում է, որ եթե Արմենին վերադարձնի նամականիշերը, նա բավականին մեծ վնասներ կկրի, քանի որ դրանք գրավ է դրել վարկ վերցնելու համար: Եթե գրավը չեղարկվի ինքը ստիպված կլինի վճարել գրավատանը տուժանք և հավելյալ տոկոսներ մոտ 300 000 ՀՀ դրամի չափով:

Հայցային վաղեմության ժամկետի կիրառելիության հարցով իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար Արմենը դիմեց փաստաբանական գրասենյակ:

1. Իրավաչա՞փ են արդյոք կողմերի պնդումները: Վերլուծեք կողմերի միջև առկա հնարավոր բոլոր իրավահարաբերությունները, միմյանց նկատմամբ ներկայացած պահանջները և լուծեք վեճը՝ հղում կատարելով խնդրում ներկայացված բոլոր փաստերին:

/7 միավոր/

2. Արմենի կողմից ներկայացված պահանջի նկատմամբ ենթակա՞ է արդյոք կիրառման հայցային վաղեմության ժամկետ

/7 միավոր/

Խնդիր 3. /12 միավոր/

Լիանա Գրիգորյանը Դավիթ Մարտիրոսյանի հետ ամուսնացել էր 2006 թ. հոկտեմբերի 28-ին: 2011 թ. հունվարի 10-ին ընտանեկան անախորժությունների պատճառով նրանք ամուսնալուծվեցին:

Ամուսնալուծությունից հետո Դավիթը տեղեկանում է, որ Լիանայի անունով 2010 թ. մարտի 10-ին կնքված առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել են 4 ավտոմեքենաներ:

Դավիթը 2013թ. մարտի 1-ին դիմեց դատարան և պահանջեց, որպեսզի մեքենաներից երկուսը հանձնեն իրեն: Պահանջի հիմքում դրվեց այն, որ Քաղ. օր. 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքի նկատմամբ օրենքի ուժով ծագում է ամուսինների համատեղ սեփականության

իրավունք, հետևաբար գնված մեքենաների նկատմամբ ինքը ևս ունի սեփականության իրավունք և Քաղ. օր. 197-րդ հոդվածի ուժով իրավունք ունի պահանջել ընդհանուր գույքի բաժանում բնեղենով:

Արթուր Գրիգորյանը, ով հանդիսանում էր Լիանայի եղբայրը, իր հերթին, հայց ներկայացրեց նույն դատարան՝ վեճի առարկա ավտոմեքենաների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պայանջով: Իր պահանջն Արթուրը հիմնավորում է նրանով, որ նշված 4 ավտոմեքենաները փաստացի պատկանում են իրեն, իսկ քրոջ՝ Լիանայի անվամբ դրանց ձևակերպումը կրել է ձևական բնույթ և պայմանավորված է եղել իր անվամբ տվյալ ժամանակաշրջանում գույք ձեռք բերելու աննպատակահարմարությամբ: Իր պնդումը նա պատճառաբանում է հետևյալով՝

ա. ինքը հանդիսանում է տաքսի ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատեր, և վեճի առարկա ավտոմեքենաները Հ ՍՊԸ-ից ձեռք է բերել ուղևորափոխադրումներ կազմակերպելու նպատակով.

բ. ավտոմեքենաները Հ ՍՊԸ-ից ձեռք են բերվել տարաժամկետ վճարման պայմանով, ինքը հանդիսացել է այդ պարտավորությունների կատարման երաշխավորը, ինքն է կատարել բոլոր վճարումները, որպիսի փաստը հավաստվում է վճարման անդորրագրերով.

գ. ձեռքբերման պահից ավտոմեքենաներն իր կողմից շահագործվում են որպես տաքսիներ, իր կողմից են կատարվում դրանց վերանորոգման և շահագործման հետ կապված ծախսերը, պարտադիր ապահովագրության և գույքահարկի գծով պարտավորությունները, ինչը ևս հաստատվում է համապատասխան փաստաթղթերով:

Գործով ապացուցվեց, որ վաճառողը՝ Հ ՍՊԸ-ը, չի իմացել, որ ավտոմեքենաների իրական ձեռք բերողն Արթուրն է, այլ ոչ թե Լիանան:

Դատաքննության ընթացքում պարզվեց, որ Արթուրը վեճի առարկա հանդիսացող ավտոմեքենաներից երկուսը 2013 թ. մարտի 20-ին Լիանայի կողմից տրված լիազորագրի հիման վրա դրանց շուկայական արժեքից կրկնակի անգամ ցածր գնով վաճառել է իր մորը՝ Անահիտ Գրիգորյանին՝ շարունակելով իրականացնել դրանց շահագործումը:

Դավիթը դատարանում հայտնեց, որ կինն այդ ավտոմեքնաները ձեռք է բերել և իր անվամբ ձևակերպել է օրենքով սահմանված կարգով, իսկ Արթուրի փաստարկներն անհիմն են, քանի որ Լիանան և Արթուրն այդ կերպ ցանկանում են խաբեությամբ իրեն զրկել մեքենաների նկատմամբ ունեցած իրավունքից: Դավիթը պահանջեց նաև անվավեր ճանաչել Արթուրի և նրա մոր միջև օրենքի խախտմամբ կնքված պայմանագիրը:

1. **Իրավաչա՞փ են արդյոք կողմերի պնդումները: Վերլուծեք կողմերի միջև առկա հնարավոր բոլոր իրավահարաբերությունները, միմյանց նկատմամբ ներկայացած պահանջները և լուծեք վեճը՝ հղում կատարելով խնդրում ներկայացված բոլոր փաստերին**

/6 միավոր/

2. **Վավեր է արդյոք լիազորագիրը և դրա հիման վրա Արթուրի ու նրա մոր միջև կնքված ավտոմեքենաների առուվաճառքի պայմանագիրը: Հիմնավորել պատասխանը**

/6 միավոր/

Խնդիր 4. /12 միավոր/

«Լույս» ՍՊԸ ընկերության կադրերի բաժնի գլխավոր մասնագետ Մ. Սիմոնյանը, ով նախկինում նույն գործատուի մոտ զբաղեցնում էր քարտուղարության բաժնի ավագ մասնագետի հաստիքը, գործատուի կողմից ընդունված համապատասխան անհատական իրավական ակտի հիման վրա ազատվել է աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով *(հաստիքների կրճատում):* Աշխատողի պահանջն առ այն, որ նշված կետի հիմքով աշխատանքից ազատելիս գործատուն պետք է նախապես ծանուցի աշխատողին, գործատուի ներկայացուցիչը պատճառաբանել է, որ ՀՀ աշխատանքնային օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում թույլատրվում է աշխատողին ազատել աշխատանքից առանց ծանուցման, իսկ հաստիքների կրճատումը հենց այդպիսի հիմքերից է:

Հարց 1. Իրավաչա՞փ է արդյոք գործատուի պատճառաբանությունը: Արդյո՞ք ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների համատեքստում գործատուի պարտավորությունները խնդրում մատնանշված փաստական հանգամանքների շրջանակներում սահմանափակվում են բացառապես ծանուցման ժամկետների պահպանությամբ:

/6 միավոր/

Հարց 2. Ո՞ր դեպքերում է արգելվում աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ:

/6 միավոր/